ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N---------Ա «---» ---------- 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ԵՎ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի ենթակայության «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունից որպես նվիրաբերություն ընդունել վերջինիս սեփականության իրավունքով պատկանող թվով 24 հիվանդանոցային մահճակալները՝ ընդամենը 2,126,304 դրամ հաշվեկշռային արժեքով, և թվով 12 մահճակալի կողային սեղանիկները՝ ընդամենը 816,348 դրամ հաշվեկշռային արժեքով:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող թվով 24 հիվանդանոցային մահճակալները ընդամենը 2,126,304 դրամ հաշվեկշռային արժեքով և թվով 12 մահճակալների կողային սեղանիկները ընդամենը 816,348 դրամ հաշվեկշռային արժեքով նվիրել Գյումրու «Մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել գույքի նվիրաբերության, իսկ Գյումրու «Մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության հետ՝ գույքի նվիրատվության պայմանագիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Քրոնիմետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աջակցությամբ «Գերմանացի հայ-գերմանացի բժիշկների և բուժաշխատողների միություն» հասարակական կազմակերպության /այսուհետ՝ հովանավոր/ կողմից Երևանի ենթակայության «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը /այսուհետ՝ բժշկական կենտրոն/ որպես նվիրատվություն ուղարկվել է օգտագործված 48 հիվանդասենյակային մահճակալներ և մահճակալներին կից 25 կողային սեղանիկներ /այսուհետ՝ գույք/: Հովանավորների կողմից էլեկտրոնային փոստով ուղարկված նախնական նամակով գույքը նախատեսվել է բժշկական կենտրոնի /24 հիվանդանոցային մահճակալ և 13 մահճակալի կողային սեղանիկ/ և Գյումրու «Մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության համար /24 հիվանդանոցային մահճակալ և 12 մահճակալի կողային սեղանիկ/, սակայն գույքի բոլոր ուղեկցող փաստաթղթերը /հաշիվ-ապրանքագրեր և տեղափոխման հաշիվներ/ հասցեագրված են եղել և դուրս են գրվել բժշկական կենտրոնի անունով:

Բժշկական կենտրոնի և հովանավորների հետ քննարկումներից հետո վերջիններս հրաժարվել են փոխել գույքի ուղեկցող փաստաթղթերը և հաշվի առնելով, որ գույքի տեխափոխման հետ կապված փաստաթղթերը դուրս են գրվել բժշկական կենտրոնի անունով, ապա մաքսազերծումը կատարվել է «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության անունով, հետևաբար՝ սահմանված կարգով հաշվառվել է վերջինիս հաշվապահական հաշվեկշռում Արարատյան մաքսատան կողմից 07.02.2019թ. տրամադրված հ.236150 հայտարարագրով սահմանված մաքսային արժեքով, որը կազմում է 5,442,331 դրամ, կամ 1 հիվանդանոցային մահճակալի արժեքը՝ 88,596 դրամ, 1 մահճակալի կողային սեղանիկի արժեքը՝ 68,029 դրամ: Գույքի մաքսային արժեքը որոշվել է «Մաքսային Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի հոդված 10-ի համաձայն՝ համանման կամ նույնանման ապրանքների հետ համադրման միջոցով: Համաձայն անկախ գնահատողի կողմից տրված շուկայական արժեքի վերաբերյալ գնահատման հաշվետվության /կցվում է/՝ 1 հիվանդանոցային մահճակալի արժեքը գնահատվել է 85,000 դրամ, 1 մահճակալի կողային սեղանիկի արժեքը՝ 65,000 հազար դրամ: 16.07.2017թ. դրությամբ գույքի ընդամենը արժեքը չի գերազանցում բուժհաստատության ակտիվների հաշվեկշռային արժեքի /2,745.2 մլն ՀՀ դրամ/ 25 տոկոսը:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան համայնքի կողմից ընդունել գույքը որպես նվիրաբերություն՝ հետագայում Գյումրու «Մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը նվիրատվություն տալու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և գույքի նվիրատվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և գույքի նվիրատվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**